# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ-ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N01

## 27 ՕԳՈՍՏՈՍ 2021Թ. ԿՆՔՎԱԾ N «ԾՔ-ԳՀԱՊՁԲ-21/15/1» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Ծաղկաձոր <<01>> հոկտեմբեր 2021թ.

Ծաղկաձորի համայնքապետարանը, այսուհետ <<Գնորդ>>, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Հարությունյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արտստրոմ>> ԲԲԸ-ն, այսուհետ <<Վաճառող>>, ի դեմս տնօրեն Ա.Միրոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ցուցաբերելով երկկողմանի կամահայտնություն, հիմք ընդունելով 27.08.2021թ. կնքված N «**ԾՔ-ԳՀԱՊՁԲ-21/15/1**» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան
   1.1 Կողմերը համաձայնում են **27 օգոստոս 2021թ կնքված N «ԾՔ-ԳՀԱՊՁԲ-21/15/1»** գնման պայմանագրում 2021 թվականի հոկտեմբերի 1-ին կատարել հետևյալ փոփոխությունները.
   1.2 Պայմանագրի Հավելված թիվ 1՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ ապրանքների մատակարարման ժամկետը սահմանելով՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ը:
   1.3 Սույն պայմանագրում չնշված Գնման պայմանագրով նախատեսված դրույթները թողնվում են անփոփոխ:
   1.4 Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**ԳՆՈՐԴ**

Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
ՀՀ ՖՆ ԳՎ
ՀՎՀՀ 03001885
Հ/Հ 900122002224,900122000392
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան
--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Արտստրոմ>> ԲԲԸ
ք.Երևան,Գևորգ Չաուշի 2ա
<<Բիբլոս Բանկ Արմենիա>> ՓԲԸ
ՀՎՀՀ 03301476
h/h 2140004799610100
Տնօրեն Ա.Միրոյան
--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.